/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա/Ժնև/18.06.-20.06.2018թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 66-րդ հերթական լիակազմ նստաշրջան և Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Կայուն զարգացման նպատակների վիճակագրության և ռազմավարական գործընկերության վերաբերյալ սեմինար

- **Քննարկված թեմաները**

Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 66-րդ հերթական լիակազմ նստաշրջանին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Նստաշրջանի բացում և օրակարգի ընդունում

2. ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի նստաշրջանից բխող հարցեր

3. Ինչն է կարևորվում՝ պաշտոնական վիճակագրության ընդլայնումը.

ա. Նստաշրջան 1՝ Ի հայտ եկող թեմաներ

բ. Նստաշրջան 2՝ Ինչպես արագ արձագանքել

4. Կոնֆերանսի հովանու ներքո կազմված զեկույցներ, ուղեցույցներ և առաջարկություններ

ա. Առաջատար, բաղադրյալ և զգայուն ցուցանիշներ, միջանկյալ զեկույց

բ. Տվյալների ինտեգրումը միգրացիայի չափման համար

գ. Միջազգային աշխատանքային շարժունակության չափում

դ. Ռեգիստրների և վարչական տվյալների օգտագործումը մարդահամարների և կացարանների հաշվառումների համար

ե. Վիճակագրական օրենսդրության ընդհանուր տարրերը

զ. Ձեռնարկատիրության վիճակագրություն

է. Տնտեսական տվյալների փոխանակում և համատեղ օգտագործում

5. Համագործակցություն ՄԱԿ-ի Գլոբալ աշխարհատարածական տեղեկատվության կառավարման հետ. Եվրոպան աշխարհատարածական տվյալների և վիճակագրության վերաբերյալ

6. Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման համար Բարձր մակարդակի խմբի աշխատանքը

7. Հասցնել մեր ուղերձը. Ռազմավարական պատկերացումները վիճակագրական հաղորդակցման մոդեռնիզացման շուրջ

8. Կայուն զարգացման նպատակների համար վիճակագրությունը

ա. Կայուն զարգացման նպատակների համար վիճակագրության վերաբերյալ Եվրոպական Վիճակագիրների կոնֆերանսի ճանապարհային քարտեզի իրականացման առաջընթացը

բ. Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի և 2030 թ. օրակարգի համար Գործընկերության, համագործակցության և ներուժի կառուցման բարձր մակարդակի խմբի անդամների ռոտացիայի սկզբունքները ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանից

9. Ներուժի զարգացման ռազմավարությունը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում

10. Թեմաների ընտրությունը սեմինարների համար, որոնք տեղի են ունենալու Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 2019թ. լիակազմ նստաշրջանի ժամանակ

11. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության ենթածրագրի աշխատանքների ծրագիրը

ա. Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի, դրա բյուրոյի և մասնագետների թիմերի աշխատանքի վերաբերյալ զեկույցները

բ. Ազգային հաշիվների փորձագիտական խմբի աշխատանքը

գ. Ծրագրի պլանավորման փաստաթղթերը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության ենթածրագրի համար

12. 2017թ. հոկտեմբերին և 2018թ. փետրվարին Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի կողմից անցկացված խորացված վերանայումների արդյունքները

13. Այլ հարցեր

14. Զեկույցի ընդունումն ու հանդիպման փակումը:

2018թ. հունիսի 18-ին մասնակցել եմ Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի Բյուրոյի նիստին որպես Բյուրոյի փոխնախագահ:

2018թ. հունիսի 20-ին Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 66-րդ հերթական լիակազմ նստաշրջանի ներքո կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի և

Կենտրոնական Ասիայի երկրների համար Կայուն զարգացման նպատակների վիճակագրության և ռազմավարական գործընկերության վերաբերյալ սեմինարին քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի ճանապարհային քարտեզի իրականացումը ԿԶՆ-ի վիճակագրության համար և կարիքները կարողությունների զարգացման համար
- Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի կարողությունների զարգացման նոր ռազմավարությունը
- ԿԶՆ-ի (և դրանից դուրս) վիճակագրական կարողությունների զարգացման ազգային ծրագրերն ու առաջնահերթությունները
- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքը ռազմավարական գործընկերության վերաբերյալ
- Մտորումները ռազմավարական գործընկերության սեմինարի վերաբերյալ
- Եզրակացություններ
  - Ամփոփում և հաջորդ քայլեր
  - ԿԶՆ-ի աշխատանքային խմբերը և ներգրավվելու հնարավորությունները:

Հայաստանը ներկայացրեց ՀՀ վիճակագրական կոմիտեի ԿԶՆ-ի համար վիճակագրական կարողությունների զարգացման ազգային ծրագրերն ու առաջնահերթությունները:

- **Արդյունքները**

Մասնակցությունը նստաշրջանին և սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարներին քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման և վարման լավագույն փորձին, ուղեցույցներին, առաջարկություններին և վերջին զարգացումներին միտված ազգային վիճակագրությունների և դրանց միջազգային համադրելիության բարելավմանը:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյան